**Արձանագրություն N 4**
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնանշման հարցման
Գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28 հունիսի 2021թ
ժամը 14:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Է.Հակոբյանը
անդամներ՝ Ս.Գասպարյանը, Ե.Վարդանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Հայտերի գնահատման արդյունքների մասին**

(Է.Հակոբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ «ԷՄԳԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացված փաստաթղթերի շտկված տարբերակները:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հանձնաժողովը հաշվի առնելով, որ մասնակիցների կողմից 5-րդ, 8-րդ, 10-12-րդ չափաբաժինների համար առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, որոշեց.

ա/ կասեցնել նիստը ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.6 կետի համաձայն՝ 5-րդ, 8-րդ, 10-12-րդ չափաբաժինների համար առաջարկված գները այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու հանգամանքով պայմանավորված:

բ/ ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին ծանուցել գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու համար:

գ/ գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու և ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 1-ին ժամը 15.00-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Է.Հակոբյան

անդամներ՝ _____ Ս.Գասպարյան

_____ Ե.Վարդանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան